

23(416)
31.07.2015

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս համաճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԻՐ

Lusarar

ՆՊԱՏԱԿՆ Է՝ ԱՐՅԱՒՏՈՒՄ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵՂՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԱՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 24-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և ԼՂՀ ԿԳՆ Արցախի գիտական կենտրոնի համատեղ նիստ, որտեղ ներկայացվեցին համագործակցության շրջանակներում 2013-2015թթ. իրականացվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվությունները: Նիստը բացելով՝ Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Ստեփան Դադայանը նշեց, որ գիտական թեմաներն իրականացվել են ՀՀ ԳԱՍ հայ կենսատեխնոլոգիայի գիտաարտադրական կենտրոնի (տնօրեն՝ ակադեմիկոս Աշոտ Սարյան), էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի (տնօրեն՝ Արմեն Սաղաթեյան), մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի (տնօրեն՝ Արսեն Առաքելյան) և ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի (տնօրեն՝ Արտակ Մկրտչյան) մասնակցությամբ: Ներկա էին նշված գիտական հաստատությունների տնօրենները, ինչպես նաև քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Թավադյանը: Նիստին մասնակցում էին ԼՂՀ Աժ փոխնախագահ, Արցախի ԳԿ գիտխորհրդի անդամ, գիտությունների դոկտոր Վահրամ Բալայանը, ԿԳՍ նախարար Սլավա Ասրյանը, ԱԳԿ գիտխորհրդի անդամներ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ տեղեկացնելով, որ երկրորդ ամփոփիչ նիստն են անցկացնում Արցախի համար նախատեսված այս ծրագրի ավարտից հետո, իսկ առաջին անգամ այն անցկացվել է Երևանում՝ ակադեմիկոս Ա. Սարյանի ինստիտուտում: Ծրագրի ելույթում, ԳԳԿ տնօրենի պարզաբանմամբ, հետևյալն է. ՀՀ կառավարության որոշմամբ իրականացվում է «Տարածաշրջանների համաչափ զարգացման ծրագիր», որի նպատակն է Հայաստանի տարբեր մարզերում համաչափորեն զարգացնել տնտեսության բոլոր ոլորտները: Ծրագիրը մեկնարկել է Արցախից. հաշվի է առնվել, որ այն ևս ՀՀ տարածաշրջաններից մեկն է, շարունակվել է ՀՀ այլ մարզերում: «Սկզբում մտավախություն ունեցինք, որ ծրագիրը կտապալվի, որովհետև Դարաբաղում ծանր վիճակ էր, համալսարանում և այլ գիտական հաստատություններում՝ սարքավորումների խիստ պակաս, կադրային որոշակի խնդիրներ: Բարեբախտաբար, ծրագիրը հաջողությամբ իրագործվում է. առաջին փուլում 5 ծրագրերից 4-ը թողեցին շատ լավ տպավորություն, հույս ունեն, որ մասնատիպ արդյունք կունենանք այս անգամ ևս: Նաև ասեմ՝ ծրագիրը զարգանալու միտում ունի», - ասաց ԳԳԿ տնօրենը:

Այնուհետև նա ներկայացրեց ՀՀ-ում ընթացող գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումները:

Մինչև 2005 թվականը գիտության ոլորտում կառավարության որևէ լուրջ որոշում չի եղել: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները. նախ՝ 88-ի հուկուկու երկրաշարժը, որը Հայաստանի ամենախոշոր 70 տոկոսն ավերակների վերածեց, Արցախյան պատերազմը, հետպատերազմյան

վիճակը: Ժամանակներն այնպիսին

ԳԳԿ նախագահը թվարկեց այդ



էին, որ մտածել գիտության և կրթության զարգացումն ապահովելու մասին, իրատեսական չէր, որովհետև երկրորդ օրվա հացի խնդիր էր լուծում, և պետությունը բավական ծանր վիճակում էր: 2000-ական թվականներից սկսած՝ սկսեց նկատվել տնտեսության արագ զարգացում. Մյուս կողմից էլ, պետության ղեկավարներն սկսեցին իրենց հայացքն ուղղել դեպի գիտությունը, որովհետև շրջապատման և կիսապատերազմական վիճակում գտնվող պետության համար շարունակական զարգացումն ապահովելու նպատակով, բնականաբար, անհրաժեշտ էր ուշադրությունը սևեռել գիտելիքահենք տնտեսությունը որդեգրեց նմանատիպ տնտեսություն ունենալու ուղղությամբ:

2005թ. ստեղծվեցին 3 միջգերատեսչական հանձնաժողովներ, որոնք պետք է մշակեին ՀՀ գիտության զարգացման հայեցակարգային դրույթները: Դրանց հիման վրա ստեղծվեց միասնական փաստաթուղթ, որում ներառվեցին 2008-2020թթ. ՀՀ գիտության ոլորտում զարգացման փուլերը: Կարևորագույն քայլերից մեկը պետք է լիներ նոր կառույցի ստեղծումը, որը պետք է ամբողջությամբ համակարգեր գիտության ոլորտը: ՀՀ-ում գործում են ԳԱՍ և ճյուղային հետազոտական հիմնարկներ, համալսարաններ, բայց դրանք բավարար չեն, որ իրականացվող պետական քաղաքականությունը գիտության ոլորտում: Դրանք զուտ գիտական հիմնարկներ էին, որ գաղտնի էին գիտությանը և օժտված չէին կառավարչական գործառնությունով: ԿԳՆ-ում գործող վարչությունն էլ լուրջ գիտական հարցերով չէր զբաղվում: Այդ պատճառով էլ գիտության վերաբերյալ հայեցակարգային դրույթներում առաջին կարևորագույն կետերից մեկը նոր կառուցվածքի ստեղծումն էր, որը պետք է իր վրա վերցներ թե՛ գիտության ոլորտի բարեփոխումների ողջ ընթացքը, թե՛ միջազգային հարաբերությունների իրականացումը, թե՛ գիտության ֆինանսավորման, երիտասարդացման խնդիրները և այլ բազմաթիվ առաքելություններ: Եվ 2007թ. երկրի նախագահի հրամանագրով ԿԳ ոլորտում ստեղծվեց Գիտություն պետական կոմիտե, որի վրա դրվեց իրականացվելիք ողջ քաղաքականությունը:

տարիների ընթացքում կատարված աշխատանքները: Առաջին քայլն անձնագրավորումն էր, թե ինչ է մնացել ՀՀ-ում: Հիշենք, որ խորհրդային տարիներին Հայաստանը գիտության ոլորտում ամենամեծ հաջողություններ գրանցած հանրապետություններից մեկն էր. չկար մի որևէ պետական ծրագիր, որտեղ Հայաստանն իր վճռական դերակատարությունն ունեցած չլիներ: Հայաստանը միշտ էլ ունեցել է բավականին ամուր դիրքեր: Գիտությանը հատկացվում էր անհեղինակ թույլտվություն: Նրա վրա ծախսվող գումարները Հայաստանում տատանվում էին 400-600 մլն դոլարի սահմաններում: Կիրառական ծրագրերի գերակշռող մեծամասնությունն էր պաշտպանական նշանակությունը, և այդ ծրագրերի մեծ մասը մինչև հիմա էլ զարդանալով մնում է: Կորուստը մեծ էր բնականաբար:

2008թ. սկսեցին անձնագրավորումը՝ ինչ է մնացել գիտական հաստատություններում: Խորհրդային այն լավ տարիներին, երբ առկա էր հզոր գիտական կենտրոն և բավականին մեծ ֆինանսավորում, Հայաստանում աշխատում էին շուրջ 33 հազար գիտնականներ, որոնց մեծ մասն իրականացնում էր միութենական նշանակության ծրագրեր: Կիրառական ծրագրերի 70 տոկոսը միութենական նշանակության, հիմնականում ռազմական թեթու ունեթ, և, հետևաբար, աշխատողները ծառայում էին ողջ խորհրդային Միությանը: Գիտությունների տեղեկատվությանը՝ այսօր ՀՀ-ում գիտական գործունեությանը զբաղվում է մոտ 7,5 հազար մարդ: Շատ է, թե քիչ՝ հռետորական հարց է: Բանն այն է, որ 7,5 հազար գիտնականները եթե ակտիվ աշխատեն 3 մլն-ոց պետության համար, փոքր թիվ չէ, և եթե հաջողությամբ իրականացնեն իրենց առաքելությունը, կարելի է մեծ արդյունքների հասնել: Բայց շատ մեծ թիվ էլ չէ սա. 7,5 հազարն այն նվազագույնն է, որը կարող է Հայաստանում իրականացնել լուրջ գիտական զարգացում, կարծում է ԳԳԿ նախագահը:

Խորհրդային Միության փլուզմամբ ոչ միայն կենտրոնական ֆինանսավորման ծավալները դարձան զրո, այլև մեր երկիրն ստիպված էր ամբողջ այդ բեռը վերցնել իր ուսերին: Իրոք, ծանր ժամանակներ էին հայրենական գիտության համար:

Հիշենք այն ժամանակները, երբ գիտաշխատողն ստանում էր ամսական 7-8 հազար դրամ աշխատավարձ, որը կարող էր բավարարել ընդամենը 3-4 օր ապրելու համար:

ԳԳԿ նախագահը թվարկեց այն քայլերը, որոնք տվել են որոշակի արդյունք: Նրա խոսքով՝ Գիտության պետական կոմիտեի ստեղծումը չընկալվեց միարժեքորեն: Որոշակի խնդիրներ առաջացան նաև տարբեր տարիքային խմբերի գիտնականների և կոմիտեի միջև: ԳԳԿ-ն ստեղծել է անկախ փորձաքննական համակարգ, որը հետխորհրդային պետությունների մեջ համարվում է լավագույնը: Գիտական ծրագրերի ընդունման փորձաքննությունն իրականացվում է օնլայն ձևով՝ երկու լեզվով: Ծրագրերը փորձաքննություն են անցնում ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Հայաստանում գիտության ոլորտում շուրջ 1500 փորձագետներ ծառայում են ծրագրերի փորձաքննության անցկացմանը: ԳԳԿ-ն անցել է եվրոպական դասակարգիչների: Դա արվել է այն պատճառով, որ ՀՀ-ն իրականացնում է բազմաթիվ միջազգային ծրագրեր: ԳԳԿ նախագահի գնահատականով՝ այսօր միարժեքորեն կարելի է ասել, որ ՀՀ-ն հետխորհրդային պետությունների մեջ այն երկրներից է, որն իրականացնում է բավականին բարձր որակի անկախ փորձաքննություն: Դա կարևոր արդյունքներից մեկն է: Երկրորդն այն է, որ ստեղծել է միջազգային հզոր կապեր, ՀՀ-ն հսկայածավալ աշխատանքներ է իրականացնում տարբեր երկրների հետ համատեղ: Բավական է ասել, որ վերջին տարիների ընթացքում կնքվել են ավելի քան 30 միջազգային համաձայնագրեր աշխարհի տարբեր երկրների հետ, և այսօր ՀՀ-ում համատեղ ավելի քան 100 միջազգային ծրագրեր են իրականացվում: ՀՀ-ի գիտական բարձրագույն կենտրոններն են Եվրամիության բազմաթիվ երկրներ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Շվեյցարիան, Իտալիան, ԱՊՀ երկրներից ՌԴ-ն, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը: Բավականին լավ համագործակցություն է սկսված Չինաստանի հետ: «Երբեկոց այդպիսի լուրջ կապեր նույնիսկ խորհրդային ժամանակներում Հայաստանը չի ունեցել: Մեր քայլերը՝ ուղղված Հայաստանը միջազգային գիտակրթական տարածքին ինտեգրելու ուղղությամբ, հաջողությամբ են ընթացել», - ասաց Ա. Հարությունյանը: Նրա համոզմամբ՝ դա բերեց նրան, որ մեր երկրի գիտնականների տպագրած աշխատանքների որակի թռիչքաձև լավացում է նկատվել: Այսպիսի մի փաստ. այսօր ՀՀ-ում իրականացված աշխատանքների հիման վրա տպագրված գիտական հոդվածները բարձր վարկանիշ ունեցող միջազգային հանդեսներում են և ավելի շատ են, քան Կրասնոյարսկի և Ադրբեյջանը միասին վերցրած: Ունենալով բավականին փոքր բյուջե՝ ՀՀ գիտնականները լավագույն ամսագրերում տարեկան 1200 լուրջ գիտական աշխատանքներ են հրատարակում: Թռիչքաձև ավելացել է հայ գիտնականների աշխատանքների վրա հղումների թիվը,

վերջին 10 տարվա ընթացքում՝ 67 հազար: «Սա շատ լուրջ արդյունք է, որին կնախանձեր ցանկացած երկիր: Մեր ուրույն տեղը տարածաշրջանում արդեն ունենք», - շարունակեց ԳԳԿ նախագահը: Թվում է՝ ամեն ինչ շատ լավ է, բայց կան մեծ բազմաթիվ խնդիրներ: Այսօր ՀՀ-ում իրականացնում են ծրագրեր, որոնք նախկինում չեն եղել: Խոսքը մասնավորապես վերաբերում է գիտական սարքավորումների արդիականացմանը: ՀՀ-ում արդեն երրորդ անգամ իրականացվում են գիտական սարքավորումների մրցույթներ: Տարեկան ծախսում են 1 մլն դոլար: Մոտ 5 լաբորատորիաներ ամեն տարի համարվում են գերթամանակակից գիտական սարքավորումներով: Այն հետխորհրդային տարածքներում երկի եզակի ծրագրերից է: Բազմաթիվ տնտեսական խնդիրներ ունենալով հանդերձ՝ այսօր Հայաստանում իրականացվում են երկու խոշոր ծրագրեր: Դրանք են՝ ժամանակակից 3-րդ սերնդի սինթրոտրոնային արագացուցիչի ծրագիրը: Հայաստանում այս ծրագրի առաջին փուլն ավարտվել է: Դա արիալ՝ գծային արագացուցչային ղեկատարատորիայի ստեղծումն էր, որի վրա ծախսվել է ռեկորդային կարծ ժամանակահատված (1,5 տարի): Ծրագիրն իրականացավ ՀՀ-ի և Եվրամիության երկու գիտական հզոր կենտրոններից՝ Գերմանիայի և Շվեյցարիայի օգնությամբ: Ծրագրի արժեքը մասնագետները գնահատում են 20 մլն եվրո: ՀՀ-ն ծախսել է ընդամենը 1 մլն դոլար:

Այս տարիների ընթացքում շուրջ 30 երիտասարդներ աշխարհի տարբեր երկրներում վերապատրաստվեցին համակարգչային ֆիզիկայի և համակարգչային տեխնիկայի սպասարկման ոլորտում, որոնք այսօր այդ լաբորատորիաներում հաջողությամբ աշխատում են:

ԳԳԿ նախագահն առանձնացրեց իրենց երիտասարդական ծրագրերը: Ունեն հատուկ ծրագրեր՝ միտված երիտասարդների աջակցելուն: Արդեն ինչո՞ւ տարի է՝ իրականացնում են:

Դա երիտասարդ հայցողների, ասպիրանտների աջակցության ծրագիրն է: Մրցույթի իմաստը հետևյալն է. այն երիտասարդներին, ովքեր իրենց հետազոտական թեզն ավարտել են, աջակցում են միջազգային ակադեմիկոսների հետ լուրջ աշխատանքին անհրաժեշտ պարագաները և այլն: Մյուսը երիտասարդների թիմային երկամյա ծրագիրն է, որը նույնպես մեծ մասսայականություն է վայելում: Ծրագրի արժեքը՝ երկու տարվա համար 25 հազար դոլար, տրվում է 3-4 հոգանոց թիմին, և նրանք իրականացնում են գիտական ծրագրեր: Սա հանգեցրել է այն բանին, որ այսօր ՀՀ-ում գիտական ծրագրերի ղեկավարների 30 տոկոսը երիտասարդներ են, իսկ մինչև 2008թ. այդ թիվը մոտ էր 0-ին: ԳԳԿ նախագահի խոսքով՝ դա էլ շատ չէ, այլ ծրագրեր էլ են նախատեսվում:

ԸՆԹԱՅ

ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Ե ԱՃՈՏ ՆԵՐՍԻՍԱՆԸ

Պապմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Նոր սերունդը պետք է իմանա գաղափարներ, որ որպես դրոշակ ունենա ամբողջ կյանքի ընթացքում: Հայոց այրուքները մեր ժողովրդին փրկել է ձուլման վտանգից, բայց մեր մերտապատառ գրեթե ինչքան էլ լինեին որպես լույս մեր բազմադարյան պատմության խոչընդոտներով լի ճանապարհին, եթե մեր ժողովուրդը օրհասական պահին չլիներ միասնական, չլիներ զենքին, այդ գրեթե էլ մեզ չէին փրկի: Այստեղից բխեցնենք մի քանի խնդիրներ. մեր պատմության ընթացքում մենք հաղթանակներ ենք տարել, երբ որ եղել ենք միասնական, երբ չենք ապավինել օտարին: Հիշենք Ավարայրի, Նվարսակի ճակատամարտերը. երբ ժողովրդի մեծ մասը միավորվեց իր հրամանատարների շուրջ և տարավ հաղթանակ: Դպրոցում անցնում եք Իսրայել Օրու, Հովսեփի մասին: Նրանց գործունեությունից մենք շահել ենք: Նրանք գնացել են օտարից խնդրել գնություն: Օտարները մեզ խոստացել են, ասել են՝ կգանք կօգնենք, դուք քրիստոնյա ժողովուրդ եք, բայց արդյունքում նրանք խաբել են: Եվ երբ եկել է պահը, զգացել ենք՝ այդպես չենք լինի, դիմել ենք զենքին: Ուրեմն՝ հաղթանակի առաջին գրավականը միասնակցությունն է և կռիվը համուն հայրենիքի՝ ապավինելով սեփական ուժերին: Երբեմն մեր պատմիչների մեջ այն սխալ տեսակետն է լինում, թե մենք փոքր ենք, քիչ ենք, չենք կարող հաղթել: Բայց պետք է մեկ ուրիշ դաս քաղել. հաղթանակի մեջ քանակը կապ չունի: Օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացին 20 հազարանոց բանակով հաղթեց 10 անգամ դրանից ավել պարսկական բանակին: Ո՞ր հրամանատարը պետք է լինի մեզ համար ուսանելի. նա, ով գնում է զինվորից առաջ: Հրամանատարը զինվորից ինչո՞վ պիտի տարբերվի. թերևս միայն՝ իր ուսադիրների խաչով կամ իր գլխարկով, ինչպես Մակեդոնացին իր զինվորներից տարբերվում էր միայն իր սաղավարտով: Չորսհրամանատարը իրեն պետք է նետի ամենադժվար տեղը, եթե հրամանատարը նահանջեց, զինվորն առաջ չի գնա: Եվ ե՞րբ ենք մենք

հաղթանակներ տարել. այն դեպքում, երբ կռվել ենք համուն հաղթանակի և ոչ թե մտածելով, որ ինչ-որ մեկը պիտի գա օգնության, այլ կռվելով՝ ապավինելով սեփական ուժերին:

Դուք անցել եք Դավիթ Բեկի ապստամբությունը: Հովսեփի էմինը, Իսրայել Օրին ուրիշների դռները ծեծեցին, բայց ի վերջո հայ ժողովուրդը համոզվեց, որ օտարը չի գալու մեզ փրկի, մեզ ոչ մեկն էլ չի փրկի: 1918թ. մայիսյան օրերին մեզ ո՞վ փրկեց. ռուսը այստեղից գնացել էր, արևմուտքը չէր ուզում մեր մասին լսել, մնացել էինք մենք և թուրքերը, մեզ ո՞վ փրկեց. սիսայս զարգափարով պիտի առաջնորդվեք: Եվ մեզ համար պիտի ուսանելի լինեն այն հրամանատարները, այն թագավորները, որոնք օրհասական պահին կանգնել են իրենց ժողովրդի գլխին և ամենավտանգավոր տեղը իրենք են գնացել: Հնագույն ժամանակներից այդպես է եղել: Չորսհրամանատարը միևնույն ժամանակ թագավոր էր, վարչական ղեկավար էր: Ինչու՞ ենք մենք խոսում Մենուայի, Արգիշտիի մասին, որովհետև թագավոր-գործարարամաստարներ էին, որ առաջինն էին միավորել հայկական լեռնաշխարհի որոշ ցեղեր: Գանք ներկա օրերին: Հայաստանի 3-րդ համարապետությունը, ԼՂ փաստացի անկախ հանրապետության գոյությունը հետևանք են սեփական ուժերին ապավինելու, միավորվելու: 88-ին կարգախոսներով գնում էինք հրապարակ, ասում էինք՝ Գորբաչովը կլուծի Դարաբաղի հարցը: Պարզվեց, որ նրանք խորհրդային կայսրապետության շահերի արտահայտիչն են: Եվ տեսնելով, որ այդպես չի լինի, թշնամուն դիմադրավելու համար ստեղծեցին կամավորական ջոկատներ, որոնք միավորվելով՝ հիմք դրեցին կամոնավոր մեր բանակին, և այսօր ունենք երկու հայկական պետություն: Եթե այդ պետությունը փաստացի կա, թող աշխարհը չճանաչի մեզ, մենք պետք է ուժեղանանք: Մեզ համար Ցեղասպանության միջազգային ճանաչումից ավելի կարևոր է մեր պետությունների ամրապնդումը: Եթե մեր երկու պետություններն ամրապնդենք, մեր բանակը ուժեղացնենք, աստիճանաբար այդ պետությունները վաղը կմիանան, հետո մեր կորսված պատմական հայրենիքի շատ տարածքներ կմիանան, և այսպես կհասնենք մեր վերջնական նպատակին: Մաղթում են, որ դուք ճիշտ հասկանաք պատմությունը, ճիշտ գնահատեք հերոսներին, ընտրեք մեզ համար այն հեղինակներ, որի պայքարի արդյունքում հայ ժողովուրդը շահել է և նման հերոսներով ոգեշնչվեք: Հերոսները երկնքից չեն իջնում: Ճիշտ է, նրանք ունեն բնությունից օժտված բացառիկ տաղանդ, վաղը, մյուս օրը մեզ կարող ենք տեսնել մեր ապագա գնդապետներին, գեներալներին, գործարարամաստարներին և մեր բազմաչափայր հայրենիքի ամրակուռ ամրոցները ստեղծողներին:

ՄԵՎԵՑԻՆ ԼԱՎ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՄ



Հուլիսի 27-ին Քաշաթաղի շրջանից հերթական գորակոչիկները մեկնեցին Ստեփանակերտի զինվորական հավաքակայան՝ համալրելու հայոց բանակի շարքերը: Տարբեր բնակավայրերից են տղաները և պատրաստ են 2 տարի դառնալու հայրենի երկրի սահմանապահը: Մինչև նորակոչիկների տեղ հասնելը՝ զրուցում են զինկոմ, մայր Ստեփան Օհանջանյանի հետ: Ասաց՝ նախկին գորակոչները կապեցի են ըստ պլանի: Չորակոչիկներն արդեն իրենց գործառնություն են վիճակահանության արդյունքներով: Անսվա վերջին կկայանա ամառային վերջին գորակոչը: Չինկոմը տեղեկացրեց նաև, որ գորակոչիկներից կան 2-3 հոգի, ովքեր ունեն առողջական խնդիրներ և գտնվում են բուժօգնման մեջ: Չինկոմիսարիատում արդեն նախապատրաստվում են ձմեռային գորակոչին: Չորակոչիկներից Նվեր Մարտիրոսյանը Բերձորից է, դպրոցական տարիներին զբաղվում էր հանդբոլով. Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի հանդբոլի տղաների քիմի լավագույն մարզիկներից էր: Այժմ ՀՀ ագրարային պետական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսանող է, ավարտել է առաջին կուրսը:

Մնացածը բանակից հետո կշարունակեն,- ասաց Նվերը, ով բազմազավակ ընտանիքից է:

Ծնողները, քույր ու եղբայրները ճանապարհեցին հայրենիքի նոր զինվորին հավատով, որ երկու տարի անց նույն ոգով տուն կընդունեն: Կունայրից Սուլթանյան Ռաֆիկի վեց որդիներից Գոռը 5-րդն է, որ դարձավ զինվոր: Սունգայիթից են եկել և 1997 թվականից բնակվում են Կունայրիում: Մեկ տարեկան էր Գոռը և այստեղ հասակ առավ, ավարտեց դպրոցը՝ հիմնական կրթությամբ:

Լավ տրամադրությամբ են գնում, ասց Գոռը, -միևնույն է՝ ինչ գործառն կընկնեն, բայց ուզում են կապավոր դառնալ:

Չինկոմիսարիատում ասացին, որ Գոռը ժամանակին առողջական խնդիրներ է ունեցել, իսկ այժմ, փառք Աստծո, արդեն առողջ է և պատրաստ է զինվորական պարտքը կատարել հայրենիքի հանդեպ: Չինկոմիսարիատի միջանցքում գորակոչիկներին բարի ծառայություն ու վերադարձ մաղթեց զինկոմ Ստ. Օհանջանյանը՝ ասելով, որ հայրենիքի պաշտպանության խնդիրն այժմ նաև նրանց ուսերին է, ուստի պետք է լինեն արի, զգոն, ենթարկվեն գործառնի հրամանատարության հրահանգներին և տուն գան ավելի առնականացած: Շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, ողջունելով գորակոչիկներին, կարևորեց այն, որ տղաներն իմանան՝ ինչի համար և ուր են գնալու: Ասաց՝ զինվոր լինելը մեծ պարտականություն է: Չորակոչի բաժնում զինկոմի տեղակալ, կապիտան Կամո Ավարայանն ու բաժնի պետ, ավագ-լեյտենանտ Յուլիաննես Բայաթյանը ևս մեկ անգամ ստուգում են տղաների փաստաթղթերը, ճշտում՝ որևէ մեկը չունի՞ խնդիր, ապա հրահանգում տեղավորվել մեքենաներում:

Միրիկ գյուղից է Երվանդ Մուրադյանը, ում մայրն ասում է. «Չեն լացելու, Աստված բոլորից հաջողություն տա, հովանի ու պահպան լինի»:

Հերթական գորակոչն էլ կայացավ, և նոր տղաներ մեկնեցին՝ պաշտպանելու մեր մայրերի ու մանուկների անդրորդ:

Ջոհրաբ ԸՈՒՅՆԱՆ

ՆՊԱՏԱԿՆ Ե՝ ԱՐՑԱԽՈՒՄ ԶԱՐԳԱՑՆԵԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏԵՂԾԵԼ ԳԻՏԵԼԻՔԱՎՆԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1 թ ճախագահն ունի մի շատ լավ ծրագիր՝ բնակարանային շինարարության: Այն երիտասարդները, որոնք պատրաստ են Հայաստանում անցկացնել իրենց գիտական ուսումնասիրությունները և աշխատել Հայաստանում, մատչելի գներով բնակարաններ են մատնում: Ս. Գալստյանյանը մեծ մասայականություն վայելող մեկ այլ ծրագրի մասին էլ խոսեց՝ ասելով, որ շատ երկրներ նույնիսկ խնդրել են փոխանցել իրենց փորձը. դա, այսպես կոչված, 100 առավել ակտիվ աշխատող գիտնականների ծրագիրն է: Սա բոնուսային ծրագիր է: Ստեղծել են մի համակարգ, որով կարողանում են գիտնականների աշխատանքները գնահատել ըստ նրանց արդյունքների: Մեկ տարի տվյալ անձը պետությունից ամեն ամիս լրացուցիչ ստանում է 100 հազար դրամ: Ինչ վերաբերում է Արցախի տարածաշրջանային ծրագրերին, մտադիր են դրանք ընդարձակել, ինչպես նաև՝ Արցախը մտցնել երիտասարդական ծրագրերի մեջ, եզրափակեց ԳԳԿ նախագահը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսատեխնոլոգիայի ինստիտուտի տնօրեն և ԳԱԱ-ի կողմից պատասխանատու ու նաև ԳԳԿ-ի կողմից համակարգող Աշոտ Սադյանը փոխանցեց ԳԱԱ նախագահի ողջույնի խոսքը, ինչպես նաև՝ որոշ նկատառումներ:

Անկասկած, Արցախի գիտական կենտրոնն

ունի որոշակի հաջողություններ, բայց նրա ստեղծման գերակա խնդիրն այն է եղել, որ վերածվի ինքնուրույն աշխատող գիտական օջախի: Իհարկե, նպատակներից մեկն այն է, որ պատրաստեն գիտության թեկնածուներ, որոնք ստեղծեն համապատասխան դպրոցներ և փորձեն շարունակել: Խորհրդային պետության տարիներից Արցախի գիտնականները միշտ փայլել են: ԽՍՀՄ հայ ակադեմիկոսների ցանկում կեսից շատը ծնունդով դարբաբաղի են: Իսկ հիմա, կարծես, գիտությամբ զբաղվելու դարբաբաղիների գեներ աստիճանաբար մարում է այստեղ: Պատճառներն օբյեկտիվ են՝ պատերազմ, հետպատերազմյան շրջան և այլն: Նախկինում էլ Արցախի ենթակայության տակ ոչ մի բան չէր ստեղծվում այստեղ: Եվ խնդիրն էր՝ ստեղծել գիտական օջախ, որը պետք է աշխատի և գիտական միջավայր ձևավորի: Այդ կապակցությամբ ԳԳԿ-ն ընդառաջեց, հատկացրեց թեմաներ, Երևանից տեղափոխվեցին լաբորատորիաներ՝ հիմնական կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կողմից: Բայց այդքանը բավարար չէ: Կենտրոնը պետք է կարողանա ինքնուրույն խնդիրներ դնել և լուծել: Ակադեմիկոսի հորդորն այն էր, որ Արցախի կողմից էլ ակտիվություն ցուցաբերվի, հարցեր բարձրացվեն, լինեն առաջարկություններ: «Բոլորս էլ ուզում

ենք մի բան, որ Արցախում գիտությունը զարգանա, որպեսզի Արցախի գիտական կենտրոնի հետ հաշվի նստեն Սփյուռքի այն հայ գիտնականները, ովքեր ընդգրկված են ՀՀ ԳԱԱ-ում: Բոլորը պատրաստ են օգնելու, բայց նախաձեռնությունը տեղից պետք է լինի»:

ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Սլավա Արդյանի խոսքով՝ այդ բոլոր խնդիրները, որոնք մի քանի անգամ քննարկվել են, հանգում են շենքային պայմաններին: Այդ հարցը սեպտեմբերի 1-ի դրությամբ լիովին կլուծվի, երբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը տեղափոխվի Շուշի, և տարածքները տրամադրվեն գիտական կենտրոնին:

ԱԳԿ տնօրեն Ս. Դադայանն ընթրումով ընդունեց հնչեցված նկատառումները՝ համոզված, որ այդ ամենը բխում է գիտական կենտրոնն ավելի բարձր մակարդակի վրա տեսնելու ցանկությունից: Ավելացրեց, որ այսօր Արցախում աշխատում են գիտության 18 դոկտորներ, 150 թեկնածուներ: Կենտրոնի աշխատանքի նպատակներից մեկն էլ այն է, որ կարողանան համակարգել այդ բոլոր գիտնականների ներուժը և ծառայեցնել ԼՂՀ-ի տնտեսության առավել կարևոր խնդիրների լուծմանը: Վատահեցրեց, որ հաշվի կառնեն գործընկերների դիտարկումները և կուրախացնեն իրենց հաջո-

ղություններով:

Համատեղ նիստում լսվեցին 6 գիտական թեմաների հաշվետվություններ: «ԼՂՀ կաթնամթերքներից ընտրված կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային հատկությունները՝ ընդդեմ մարդու և կենդանիների ախտածին մանրէների (զեկուցող՝ Ա. Իսրայելյան) պարզ դարձավ, որ Արցախի կաթնաթթվային բակտերիաներն իրենց հատկություններով բարձր են Հայաստանի կաթնաթթվային բակտերիաներից, և Արցախը կարող է ունենալ իր սեփական յոգուրտները, «Էկոլոգաերկրաքիմիական հետազոտությունները Արցախի տարածքում» (զեկուցող՝ Ք. Սարգսյան) թեման բացահայտեց, որ Ստեփանակերտն աշխարհի գերմաքուր քաղաքներից է (ծանր մետաղներ չի պարունակում) և գրավիչ կարող է լինել զբոսաշրջության զարգացման համար: Մյուս թեմաները նույնպես հետաքրքրություն էին ներկայացնում իրենց կիրառական նշանակությամբ: Գիտական կենտրոնի դերը նաև այն է, որ նպաստի արտադրության մեջ գիտության ներդրմանը:

Նիստի մասնակիցները դրական գնահատեցին գիտական աշխատանքները: Ակադեմիկոս Ա. Սադյանի գնահատմամբ՝ Արցախի գիտական կենտրոնը մեկ քայլ առաջ է, քան երկու տարի առաջ էր:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՊԱՏԱՆԻ ԵՐԿՐԱՊՈՒՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՈՒՄ

Արցախի դպրոցականներն այս ամառ հնարավորություն են ունեցել հանգստանալու մեր հանրապետության ու Հայաստանի տարբեր ճամբարներում՝ ռազմաուսումնական, բնագիտական, բնապահպանական, մարզական, դպրոցական և այլն: Անդրադառնալով նրանցից մեկին, որը Գեղամա գեղեցիկուհուն մոտիկ գտնվելու պատճառով կոչվում է Սևանի ճամբար և գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդգեսի և Ծովինար գյուղերի մոտ գտնվող՝ Սևանա լճի մերձափնյա ընդարձակ, խիտ անտառածածկ տարածքում: Դա ՀՀ «Երկրապահ» կամավորական միության (ԵԿՄ) «Պատանի երկրապահ» ակումբի (ՊԵԱ) ճամբարն է: Ինչպես հայտնի է, ԵԿՄ-ն հիմնադրել է սպարապետ Վազգեն Սարգսյանը 1990 թվականին: Իսկ 1998թ. ԵԿՄ 3-րդ համագումարի որոշումով ստեղծվել է «Պատանի երկրապահ» ակումբը: Վ. Սարգսյանն իր ելույթներից մեկում առաջարկել էր ստեղծել մի կառույց, որը պետք է զբաղվեր նոր սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությամբ: Դրա դրսևորումներից մեկն էլ ՊԵԱ ռազմաուսումնական ճամբարն է: Տարիներ շարունակ այն գործում էր ուրիշ ճամբարների հենքի վրա, իսկ այս տարվանից ՀՀ կառավարության որոշմամբ հատկացվել է վերոհիշյալ տարածքը: Գեղարքունիքի անառնական մասնակցեցին նաև արցախցի դպրոցականները՝ շուրջ 300 հոգի: Մեր հանրապետության բոլոր շրջաններից և Ստեփանակերտից յոթ օրը մեկ 3-4 միկրոավտոբուսներ էին շարժվում դեպի Սևանի ճամբար: Յուրաքանչյուր հերթափոխի գրկաբաց էին ընդունում և ավարտածներին հարազատորեն ճանապարհում ԵԿՄ վարչության փոխնախագահներ Մխիթար Հարությունյանը, Դուկաս Ուլիխանյանը, ՊԵԱ նախագահ Վարդուհի Մարտիրոսյանը, ճամբարի նյութ պատասխանատուները՝ Հակոբ Հակոբյանը, մայրը Արայիկ Հարությունյանը, ճամբարի պետ Օհան Գևորգյանը, նյութները: Արցախցի երեխաներն առանձին վաշտերով համալրում էին ՀՀ տարբեր շրջանների պատանի երկրապահների շարքերը: Եվ կարճ ժամանակում բոլորը մերվում էին իրար հետ, մեկշաբաբայ համատեղ կյանքը դարձնում ամուր բարեկամության հեռանկար ամբողջ կյանքի համար: Դրան նպաստում է ճամբարի ղեկավարության նպատակալաց, զինվորական խստապահանջությամբ և նախկարծական մեծ վարպետությամբ աշխատանքը: Ինչպես տեղեկացանք Հ. Հակոբյանից, որն ստանձնել է նաև Արցախի վաշտի պատասխանատվությունը, ճամբարի ամառային գործընթացը տևում է 70 օր՝ 7-օրյա հերթափոխով, ընդհանուր առմամբ՝ 3000 երեխաների ընդգրկմամբ: Հաջորդ տարի նախատեսվում են 5000 երեխա: Իսկ ապագայում այն պետք է գործի կլոր տարի, որտեղ կարող են հանգստանալ նաև Ազատամարտի վետերանները, ԵԿՄ անդամները՝ իրենց ընտանիքներով: Ի դեպ, միայն 12500 պատանի երկրապահ կա Հայաստանում: Երկրապահները գործում են երեք տարիքային խմբերով՝ պատանի, երիտասարդ և ավագ: Ընդհանուր թիվը՝ շուրջ 50 հազար մարդ:

Այստեղ ամեն ինչ սկսվել է գրոյից: Ուսումնամարզական պարամունքներին զուգահեռվում է տարածքը ճամբարային տեսքի բերելու գործընթացը: Գեղարքունիքի ղեկավարության հետևողական ջանքերով ամեն օր բարելավվում են նրա կենցաղային պայմանները, բարեկարգվում ճամբարի շրջակայքը:

Գեղարքունի կարգապահական մոտ է զինվորականին: Ամեն ինչ արվում է զինվորական կարգով, ՊԵԱ անդամները ռազմական պարամունքներին ներկայանում են զինվորական համազգեստով: Պետք է տեսնել պատանի երկրապահների կազմավորվածությունը, կարգապահությունը, ամեն ինչում հարեհաս լինելու ձգտումը: Նրանց պատանի Արցախյան պատերազմում ուսուցող կոչվել են, հաղթել, իսկ այսօր նրանք շարունակում են պատանի գործը խաղաղ պայմաններում: Գեղարքունի նպատակ է միասնության գաղափարի ամրապնդմանը:

Հրամանատար, մայրը Ա. Հարությունյանի խստապահանջությունը մեկ նպատակ ունի՝ տղաները վաղ երբ բանակ գնան՝ հեշտ հարմարվեն զինվորական կյանքին, իսկ աղջիկները՝ կյանքի բոլոր պայմաններին:

Գեղարքունի փողովոցում են ՀՀ, ԼՂՀ և ԵԿՄ դրոշմերը: Ամեն առավոտյան տողանի ժամանակ բարձրացվում է ճամբարի դրոշմը, իսկ երեկոյան տողանի ժամանակ իջեցվում: Այդ պատիվը տրվում է օրվա ընթացքում իրենց լավագույնս դրսևորած ճամբարականներին: Արցախցիները բազմիցս արժանացան այդ պատվին:

Գեղարքունի գեղեցիկ ավանդույթներ են ձևավորվել: Ամեն հերթափոխի իրենցից մի գեղեցիկ հուշ է թողնում ճամբարում: Արցախցիները գետնին «քանդակել» էին ԼՂՀ դրոշմը, «Տատիկ-պապիկը», Ստեփանակերտը և Հուշին խորհրդանշող պատկերներ և իրենց ստորագրություններով ուղեղծ թաղել հողում, որը պետք է իրենք կամ իրենց զավակները հանեն 20 տարի անց՝ այստեղ այցելելով: Ահա թե ինչ ուղեղծ են հղել ստեփանակերտցիները: «Մենք՝ Ստեփանակերտի «Պատանի երկրապահ» ակումբի ճամբարի մասնակիցներս, ուղեղծ ենք հողում առ այն, որ մենք այս ճամբարի առաջին մասնակիցներն էինք և ակնատես ենք եղել ճամբարի կայացման առաջին քայլերին: Մեր շնորհակալությունն ենք հայտնում ԵԿՄ նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանին՝ Արցախի երեխաներին ճամբարին և մասնակից անելու համար, և երախտապարտ ենք ճամբարի անձնակազմին՝ մեզ բարեհամբույր ժպիտով ընդունելու, սիրով ու հոգատարությամբ շրջապատելու համար: Մենք այն սերնդի զավակներն ենք, որոնց հայրերն ու պապերն ուսուցող կոչվեցին ռազմի դաշտում, կրեցին հաղթանակը՝ մեզ ժառանգություն թողնելով շահած-պահած հայրենիք, խոստանում ենք լինել նրանց գործի արժանավոր շարունակողները, մեր մտավոր և ֆիզիկական ուժով ամրապնդել մեր հայրենիքը, մեր վաղվա միացյալ Հայաստանը»:

Գեղարքունի առօրյան ներառում է ինչպես ռազմական վարժանքներ, այնպես էլ մարզական, մշակութային միջոցառումներ, էքսկուրսիա՝ դեպի պատմական Հայրավանք, Սևանավանք: Իսկ երեկոներն անմոռաց էին դարձնում խարույկի շուրջ անցկացրած ժամերը: Արցախցիներն աչքի էին ընկնում իրենց ակտիվությամբ

և հերթափոխի ավարտին արժանացան պատվոգրերի, իսկ բազմաթիվ երեխաներ իրենց ծննդյան օրվա կապակցությամբ՝ Ձորավար Մ. Գրիգորյանի կողմից հուշանվերների: Ամենուց է այն օրը, երբ ճամբար էր այցելել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը: Դա ճամբարի տոնական օրերից մեկն էր: Եկել էին նաև ԵԿՄ վարչության անդամները, որոնց մեջ էր Արցախյան ազատամարտի մասնակից գնդապետ (ի դեպ՝ առաջինը Հայաստանում) Նազիկ Ամիրջանը: Տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում: Գեղարքունիքի ղեկավարները ուղեղծ էր հղել գեներալ-լեյտենանտ Մ. Գրիգորյանը: Շատերը ողջույնի խոսք ասացին, այդ թվում՝ «Լուսարար» թերթի խմբագիրը՝ Արցախի կողմից: Ի դեպ, իրենց գործունեության համար նա և Ստեփանակերտի վաշտի ղեկավար Անահիտ Մետրոպոլիտան արժանացան ԵԿՄ մեդալների, որոնք ամառը հանձնեց Նազիկ Ամիրջանը: Իսկ արցախցի Դիանան կարողացավ ճամբարի մասին գրած իր բանաստեղծությունը: Օրը հիշարժան էր հետաքրքիր գեկուցումներով, Արտակարգ իրավիճակների և Ոստիկանության ծառայությունների աշխատակիցների կողմից ճամբարականներին հետ անցկացրած վարժանքներով, նաև տոնական ճաշով, որը պատրաստել էր տիկին Նազիկը, ով, ի դեպ, գեներալ Մ. Գրիգորյանի կինն է: Ընդհանրապես, օրվա մեջ մի քանի անգամ գորավարը հետաքրքրվում էր երեխաներով: Իսկ այն օրը, երբ արցախցիները գնացել էին Սևանավանք, որը ճամբարից հեռու է ավելի քան 100 կիլոմետրով, Ձորավարը հեռախոսագրույց ունեցավ երեխաների հետ ստացած տպավորությունների մասին, իսկ նրանք բարձրաձայն իրենց երախտագիտությունը հայտնեցին նրան:

Գեղարքունի հետաքրքիր էր նաև իր անձնակազմով: Երեխաներին միշտ կարելի էր տեսնել գեներալ Սամվել Սաֆարյանին շրջապատած, ով, լինելով Արցախյան գոյամարտի ակտիվ ազատամարտիկ, նաև բանաստեղծ է: Նրա գրքերից կային ճամբարի գրադարանում: Հեղինակը դրանք սիրով նակագրում էր ցանկացողներին: Հայաստանյան վաշտերից մեկի ղեկավարն էր փոխգնդապետ Մարտին Բաղդասարյանը՝ «Ազատագրում» փաստավավերագրական յոթատորակի հեղինակը: Իսկ վաշտերից մեկի հրամանատարն էր սփյուռքահայ ազատամարտիկ, «Խաչակիրներ» հայտնի գույմարտակից Շահեն Աճեմյանը: Նրանք երեխաներին իրենց հուշերը ներկայացրին, իսկ հերթափոխի ավարտին Շ. Աճեմյանը մի հիանալի երգ կատարեց՝ նվիրելով այն Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին:


Արցախցիները չեն մոռանա նաև այցելությունը մոտակա հետախուզական գործառնա, ծանոթությունը հետախուզների հետ:

Գեղարքունիներին այցելել է նաև ԼՂՀ «Մայրություն» հիմնադրամի նախագահ Հասմիկ Միքայելյանը, ում ջանքերով, ի դեպ, արցախցի երեխաները հնարավորություն ունեցան ներգրավվելու ՊԵԱ ճամբարին:

Գեղարքունի կյանքի մեծ դպրոց է, դպրոց՝ հայրենասիրության, ընկերասիրության, միասնության, հանդուրժողականության և այլ դրական հատկանիշների ձևավորման: Եղան երեխաներ, որոնք ինքն առաջին օրից ցանկացան վերադառնալ տուն, բայց վերջում խնդրում էին էլի մնալ: Ամենահուզիչը բաժանման պահն էր: Տարբեր վայրերից եկած երեխաները գրկախառնվել և չէին ուզում բաժանվել իրարից:

